

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Փոփոխում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բաւին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Հրատարակվում է Փոփոխում, նոյն դիւրով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք անվա-
կան ՀՅՈՒԱԳՈՐԴՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկի-
ւում, Թամաշկի տանը):

Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK»:

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով
բաւին վճարվում է 2 կոպեկ:

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպա-
գրվում են միմիայն լրագիրների յայտարարութիւնները, մասնաւորապէս և պաշտօնական հաստա-
տութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնաւորապէս տպագրելը
առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դարձեալ կօխի լիմֆա-
թի մասին. Ինչ պէտք է անենք. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարկիզ դի Բուգիւնի.
Քաղաքացիներ արտասահմանի հայոց լրագիրնե-
րից. Արտաքին լուրեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀՅՈՒԱ-
ԳՐՈՐԴՆԵՐ.—ԲՈՐՍՍ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԿԱՆ. Մի պտոյտ Բաթումում:

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱՆ, ԿՕԽԻ ԼԻՄՖԱԹԻ ԳՐՈՐԴՆԵՐՆԵՐ ՄԱ-
ՍԻՆ

«Մշակի» ներկայ տարվայ 8-րդ համարի ա-
ռաջնորդում մենք հաղորդեցինք ընթերցողնե-
րին մի քանի անվտանգ տեղեկութիւններ թո-
քաւարաններին կօխի լիմֆայով բժշկելու անա-
շուտ փորձերի մասին: Մէջ բերելով այնպիսի հե-
ղինակաւոր անձանց կարծիքներն ու արած փոր-
ձերը, ինչպէս պրոֆէսոր Սկլիֆաօսկի, պրոֆէ-
սոր Վիրխով, բժշկապետ Գուտտման, բժշկապետ
Լադարուս, բժշկապետներ Բուանէ և Ժաննէ,
մենք աւելացրինք, թէ կօխի լիմֆայի սրկմանը
ենթարկված հիւանդների մահվան դէպքերը այն-
քան բազմաթիւ են առ այժմ, որ անկասկած պէտք
է այն եղբակցութեանը զար, թէ դեռ ևս չառ

վաղ է հռչակել կօխի դեղը, որպէս մի բուժիչ
միջոց թրքախտաւորների համար:

Մենք մեր վերոյիշեալ յօդուածը վերջացրել
էինք հետեւեալ խօսքերով. «Այդ բոլոր փաստերը
ցոյց են տալիս թէ կօխի դեղը, իր դարձագրման
դեռ ևս սկզբնական շրջանումն է գտնվում, այն-
քան դեռ ևս անկասկած է նրա գտած լիմֆայի
միջոցով բժշկելու մեթոդը, այն աստիճան ան-
բաւարար են այդ բժշկութեան հետեւողները,—
որ խոհեմութիւնը պահանջում է դեռ առժամա-
նակ սպասել և չը չապալել գործարկելու թրքախ-
տով հիւանդների վրա կօխի գտած միջոցը»:

Այժմ եւրոպական բժշկական հրատարակու-
թիւնների վերջին ստացած համարներում դար-
ձեալ գտնում ենք պերճաւոր փաստեր, որոնք
ստուգում են այդ կարծիքը:

Նոյն փորձերը թրքախտաւորների վրա, որ
արեցին Գուտտման և Լադարուս՝ Բերլինում,
Բուանէ և Ժաննէ՝ Մոնպելիէում, Սկլիֆաօսկի
Մոսկույում, որոնց տիւր հետեւողների մասին
խօսում էր իր զեկուցման մէջ հռչակաւոր Վիր-
խով, ցոյց տալով բազմաթիւ դիմիւններ այն
հիւանդների, որոնք մահան կօխի լիմֆայի սրկու-
մից յետոյ, և որոնք թրքերի վրա սրկումից յե-
տոյ յայտնվեցան տուբերկուլոզային թաքմ ան-
թիւ բարկներ,—նոյն փորձերը, ասում ենք
արեւ է նորոգում և Վիլհելմի պրոֆէսոր Շնից-
լէր (Schnitzler). Մի 30 տարեկան մարդուն, որը

թրքախտով էր հիւանդ, սրկվեց կօխի լիմֆան մի,
երկու, հինգ, ապա տասն և հինգ և քսան միլիգրամի
չափով, առանց որ և է հետեւանք: Այնուհետեւ
սրկվեց նրան նոյն լիմֆան 50 միլիգրամի չա-
փով: Հիւանդի տաքութիւնը բարձրացաւ, առաջ
էկաւ հիւանդի կաղմուածքի մէջ այն, ինչ որ
բժիշկները «բէակիցա» են անում, սակայն
հիւանդի դրոշմները հեղհեղեղ վատացաւ և մի
քանի օրից յետոյ հիւանդի թէ կօխի ներքը և
թէ նոյն իսկ քիթի ծակերի ներքը՝ ծածկվեցան
սիֆիլիսի վերքերին նման, թէև փորքի, բայց
բազմաթիւ վերքերով: Հիւանդը հազիւ կարող էր
ընդունել սնունդը մինչև անգամ հեղուկ դրո-
շման մէջ: Ու՛շ չաքաւմայ ընթացքում կօխի
լիմֆայով բժշկվելուց յետոյ՝ հիւանդի թրքախտը
աւելի էլ դարձացաւ ու սաստկացաւ, քան թէ
էր բժշկութեան սկզբում: Պրոֆէսոր Շնիցլէր
Վիլհելմի բժշկական բարձրագոյն դպրոցին իր
արած զեկուցման ժամանակ ներկայացրեց և մի
27 տարեկան թրքախտաւոր կնոջ, որի վրա նոյն-
պէս փորձել էր կօխի բժշկութեան մեթոդը:
Այդ կնոջ նախ սկսեց զգալի կերպով լաւանալ,
սակայն հեղհեղեղ թրքախտը սկսեց աւելի սաստ-
կանալ և այժմ հիւանդի դրոշմները շատ ծանր
է: Շնիցլէր յիշում է իր պրակտիկայից մի երկու
հատ դէպքեր միայն, երբ կօխի մեթոդով բժշկե-
լով, հիւանդը սկսեց լաւանալ և նրա մարմնի
կշիռն աւելացաւ:

Ապա կը հաղորդենք այստեղ և հետեւեալ իրո-
ղութիւնը: Վիլհելմի կայսերական բժշկական
ընկերութեան ներկայ տարվայ յունվարի 30-ին
կայացած ժողովի նիստում բժշկապետ Դրաշէ
(Drasche) մի զեկուցում արեց, ներկայացնելով մի
հիւանդին, որին ինքը բժշկելիս է եղել կօխի լիմ-
ֆայով: Հիւանդն ունէր տուբերկուլոզային բարկ-
ներ լեզուի վրա. նրան արեցին լիմֆայի սրկումներ
2 միլիգրամի չափով: Հիւանդի դրոշմները սկզբից
վատացաւ, ապա սկսեց զգալի կերպով լաւանալ:
Իսկ ինչ վերաբերում է թրքախտով հիւանդնե-
րին, Դրաշէ կարծում է, որ կօխի լիմֆան ոչ թէ
միայն չէ օգնում, կամ չէ թեթեւացնում այդ հի-
ւանդութիւնը, բայց ընդհակառակն, սաստկաց-
նում է հիւանդութիւնը: Դրաշէ գործադրեց կօխի
մեթոդը 22 թրքախտաւորների վրա և այն եղ-
բակցութեանը հասաւ, որ կօխի լիմֆան չէ կա-
րող զեղ համարվել տուբերկուլոզային հիւանդու-
թեան դէմ. «La lymphe de Koch n'est pas un
remède contre la tuberculose», հաս Դրաշէ խօս-
քերը, որպէս դրական եղբակցութեան նրա
արած փորձերից, որոնք բառ առ բառ յիշված

են Ֆրանսիական «La Semaine Medicale» բժշկա-
կան շաբաթաթերթի № 5-ի մէջ (ներկայ տար-
վայ փետրվարի 4-ից):

Եթէ կօխի լիմֆան, մասնաւոր արած բազմա-
թիւ փորձերից յետոյ, ոչ թէ միայն անգոր է
համարվում թրքախտը բուժելու, բայց և նոյն
իսկ վտանգաւոր մի միջոց, որը սաստկացնում է
յիշեալ հիւանդութիւնը, դո՛ւնէ մինչև այժմ այդ
նորագիւտ միջոցը մի դրական և կենդանարար
միջոց էր համարվում լուպուս ասված կաշու
հիւանդութեան և տուբերկուլոզային արտաքին
երեւոյթների դէմ: Դա էր, առժամանակ, ընդհանուր
կարծիքը: Սակայն այդ կէտումն էլ մենք ստիպ-
ված ենք այժմ դառն կերպով հիասթափվել, ի
նկատի ունենալով բժշկական աշխարհի այնպիսի
հեղինակաւոր ներկայացուցիչների փորձերը, ինչ-
պէս, օրինակ, Լոնդոնի յայտնի բժիշկ Յոնաթան
Հուչինսոնի (Jonathan Hutchinson) ձեռքով նո-
րորում արած փորձերը: Բժիշկ Հուչինսոն Լոն-
դոնի Examination Hall հաստատութեան մէջ նո-
րորում մի զեկուցում արեց այն հետեւողների
մասին, որ առեց կօխի մեթոդով բժշկութիւնը,
գործադրված լինելով լուպուս ասված կաշու
հիւանդութեան դէմ: Իր զեկուցման մէջ յիշելով
բացի իր անձնական փորձերից և Լոնդոնի բժիշկ
պ. Աբրահամի (Abraham) փորձերը, նմանապէս և
Բերլինում անցկացրեց հիւանդների վրա արած փոր-
ձերը, բժշկապետ Հուչինսոն այն եղբակցութեան
է գալիս, որ ինչպէս ցոյց են տաւել երեք ամսվայ
փորձերը, կօխի լիմֆան կատարելապէս անգոր է
լուպուս ասված հիւանդութիւնն արմատախիլ ա-
նելու: Լիմֆայի սրկելուց յետոյ յայտնվում
է հիւանդի դրոշմնային ժամանակաւոր բար-
ւոյնում, սակայն մի քանի շաբաթից յետոյ, կամ
մի քանի ամսից յետոյ լուպուս ևս նորից նոյն
ոյժով և կերպարանքով է յայտնվում, ինչպէս և
բժշկութիւնից առաջ:

Գուցէ, աւելացնում է Հուչինսոն, ժամանակով
բժշկականութիւնը կը հասնի այն եղբակցու-
թեան, որ լուպուս հիւանդութիւնը կարելի է ա-
շուղթեմբ բժշկել, միայնակով այդ հիւանդու-
թեան դէմ գործ դրված հին մեթոդները՝ նորի հետ:
Վերջացնում ենք մեր յօդուածը հետեւեալ նոր
տեղեկութիւններն էլ հաղորդելով ընթերցողին:

Վիլհելմի յայտնի պրոֆէսոր Շնիցլէր, կօխի
ցաւերի մասնագէտ, նորորում մի հրապարակա-
կան զեկուցում արեց Վիլհելմի «կօխի» առ-
ված միջոցի գործածութեան մասին թրքախտի
դէմ: Շնիցլէր ուղղակի ասում է որ կօխի լիմֆան
ոչ թէ միայն օգտուէտ չէ, բայց կատարելապէս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊՏՈՅՑ ԲԱԹՈՒՄԻՄ

I

Ան ծովի զինաւոր նաւահանգիստներից մէկն է
ևս Բաթում, որը վերջին ռուս-թիւրքական պա-
տերազմից յետոյ, թիւրքերի ձեռքից անցաւ ռու-
սաց ձեռքը:

Այս քաղաքը շինված է ծովափի վրա և հենց
դրա համար է, որ ամբողջ քաղաքի տեղը, հողը
աւաղում է և անկայուն:

Շրջեկաւոր մի մեծ պտոյտ գործելուց յետոյ
քաղաքի շուրջը, գալիս կանգ է առնում նաւա-
հանգիստի մօտ, երկաթուղու ժամանակաւոր կա-
թարանի առջև. կայարանի բուն շէնքը շինվում է
քաղաքից դուրս և ծովից հեռու. այդ նոր շինվե-
լիք շէնքը թէև մօտ է գործարաններին, սակայն
հեռու լինելով նաւամատուցից, վնաս կարող է
պատճառել սպարանքատէր վաճառականներին:

Քաղաքը, երբ առաջին անգամ տեսայ, ինձ
վրա թողեց այն տպաւորութիւնը, ինչ որ թողել
թիւրքահայաստանի երկրում քաղաքը:

Մի կողմ թողնելով Բաթումը չընթացաւոր ան-

տաւախիտ բլրակները, չողենաւով և նաւակնե-
րով ծածկված ծովափը, քաղաքի մի ծայրում
գտնվող գործարանները, Բաթումը լիովին նմա-
նում է Երզրումին. նրա պէս կեղտոտ և ցեխոտ
են Բաթումի փողոցները, բայց այն գլխաւոր
փողոցից, որը սկիզբ է առնում ծովափից և
պարզվում է մինչև քաղաքի ծայրում անկված Ա-
լեքսանդրեան փողոցը: Բացի այդ փողոցից Բաթու-
մը չունի ոչ մի կամօնաւոր փողոց, իսկ դրա
փոխարէն յաճախ պատահում էր ինձ քայլել ան-
մայթ ցեխոտ փողոցների միջով, որոնց երկու
կողմերում տեսնվում են կիսաշէն, աւերակ, թաց
և խարխուլ տներ, հազիւ ուրիշն երկյարի չքեղ
շէնքեր, առհասարակ միայրակ հասարակ տներ,
փայտեայ խրճիթներ, ազեղ խանութներ և կոշո-
կոշոքներ, հողեր, փայտեր ու աւերակներ:

Մի փոքր լայն փողոցն իսկ աղատ չէ ապրանք-
ներից, այս ու այն կողմ թափվելով գերանե-
րից:

Ամբողջ քաղաքի մէջ հազիւ 10 կամ մի քիչ
աւելի գտնվին երկյարի կամ եռյարի շէնքեր, ո-
րոնց մեծ մասը հիւանդանոցներ են. դրա պատճա-
ռը ծովափնայ անկայուն հողն է. արդէն արդեւ
ված է ծովափի վրա շինել երկյարի շէնքեր, ո-
րովհետեւ յայտնվել է, որ ծովը ներսից փորում է
հողը: Այդ փաստը իսկոյն աչքի է դարձում, երբ

տեսնում էք թէ նաւահանգիստի նաւամատուցները
որչափ կարճ են և ինչպէս մեծամեծ չողենաւներ
ուղղակի մօտեցել խաբիսն են դրել այդ կարճ
նաւամատուցների կողքին. ծովը հենց ավի մօ-
տից շատ խոր է, նա ծանծաղութիւն չունի Բա-
թումի եղբայրներում: Մի փոքր գոգաձև է, դէպի
նրան նայող շէնքերի մեծ մասը կազմում են
մաքսատունը, միւս կողմից գործարանները, որոնց
կողքին են շինված ամբարտակներ թրքախտնե-
րով զինված, իսկ այդ երկուսի մէջտեղում դը-
նակում են խանութներ, որոնց մեծ մասը սրճա-
տոններ են:

Սրճատոնները քաղաքում այնչափ շատ են և
նրանց մէջ լցված ամեն աղղի խաղացողները և
խանութները այնքան ստուար, որ մարդ իրան կար-
ծում է թիւրքերի մի որ և է քաղաքում, մասնա-
ւորապէս որ ամեն կողմ աչքի են ընկնում յոյներ ի-
րաց գոռող կերպարաններով, տաճիկներ, թիւրք
սփոտաներ, ֆէսաւոր թիւրքահայեր, էֆէնդիներ,
աղաներ և մինչև իսկ թիւրքահայ գաւառացիներ
իրանց տեղական աշխատանք հազուադէպով, լայն
չափերով, կարճ բաճկոններով, եղբայրով
փաթեմած մեծ ֆէսերով և եամաններով. մին-
չև իսկ փողոցներում պտուղ էին կոչվալիս շներ
իրանց արկղիկներով և սե ու կեղտոտ դէմքե-
րով:

Խանութները, ֆոօնները և շէնքերը պահել են
դեռ ևս իրանց տաճկական կերպարանքը. խա-
նութները մէջ կարելի է գտնել թիւրքերի ամեն
տեսակ յատուկ նպարներ, ֆոօններում գտնաւոր
թիւրքական հացեր, սկսած կլոր սիւնի դնե-
րից մինչև փախլավա և բաղաւջը: Սրճա-
տներում մատուցանում են ձեզ տաճկական սուրճ,
մասալիկա, նստողները խաղում են դօմինօ և
տաճկական թաւուր, և որովհետեւ թիւրքացի
սիրում է յաճախ մոտեցնել սրճատներ, ուստի այդ
տեղերում միշտ նստոտած են յորանջող էֆէնդի-
ներ, միմեանց վրա սրճի ֆինջանը դատարկող
թիւր և աչքի սուրճ խմողներ, ներքիլ ծխողներ
և այլն:

Մի խօսքով Բաթումն ունի մի կատարեալ
թիւրքական քաղաքի կերպարանք, մասամբ խառն-
ված ռուսական փոփոխութիւններով և այդ փո-
փոխութիւնները այնքան աննշան են, որ աննկա-
տելի են լինում նրան, ով որ թիւրքից յանկարծ
ոտը է դնում Բաթումում:

Բնակիչների մեծ մասը կազմում են յոյներ և
վրացիներ, կան նաև հայեր (250 տուն), միջո-
րներ, աբխազներ, եւրոպացիներ, տաճիկներ և
մեծ քանակութեամբ թիւրքահայ ու պարսկահայ
գործաւորներ և մշակներ:

Այս բոլոր այլադան ընտանիքների մեծ մասը

Հաստատար՝ մարդկային օրգանիզմի համար: Խիղճը
չէ ներում իրան գործածել այդ դեղը և նա ցաւ
է յայտնում որ հիւանդները յափշտակվելով կօխի
գիւտով թափվեցան Բերլին: Ապա կը յիշենք
այստեղ որ բժշկական Մէնդել, Բրանդենբուր-
գեան նահանգի բժշկական խորհրդի նիստում
նորերում մի երկար ճառ է արտասանել, որի
մէջ խօսելով կօխի լիմֆայտի հիւանդներին բժշկե-
լու մեթոդի մասին, ասեց որ յանկարծակի ողե-
ւորութիւնից յետոյ այժմ նշմարելի է ամբողջ
աշխարհի բժիշկներին շրջանում մի կատարեալ
հիասթափում կօխի գիւտի վերաբերմամբ: Գով-
տոր Մէնդել անխնայ կերպով բողբոջում է կօխի
լիմֆայտի գործածութեան մեծաւաճումը հիւան-
դան հիւանդներին դէմ, որ անուամբ էին բժիշկ-
ները, ծախելով հիւանդներին վրա հուշակաւոր
լիմֆան: Այդ դեղածնունդը և հիւանդների հաւա-
տարմութեան հարստահարութիւնը՝ աւելացրեց
նա, չը լսված վարմունք է բժշկական պատմու-
թեան ամբողջ ընթացքում:

Մեր յօդուածն անփոփ չէր լինի, եթէ չը յի-
շենք այստեղ և այն ամենամիջոցն տեղեկութիւն-
ները, որ հաղորդում է Բերլինում, եւրոպական
հուշակաւոր բժիշկներին աշխատակցութեամբ և
Ֆրէնկել պրոֆէսորի խմբագրութեամբ հրատարակ-
վող գերմանական «Centralblatt für klinische
Medicin» յայտնի լրագիրը՝ և էլ պրա և լուս պ ու ս
կաշու հիւանդութիւնները կօխի լիմֆայտի միջոցով
բժշկելու վերաբերմամբ արած փորձերի մասին:
Այդ փորձերը վերին աստիճանի անմիջեմբար են:
Բժշկական Կոն (Cohn) քաղաքացի է անուամբ յիշեալ
լրագրում «Deutsche medicinische Wochenschrift»
շարքաթիւթիւթում տպված Արնինգ (Arning)
բժշկական յօդուածից կօխի միջոցով լուս պ ու ս
է պրայի բժշկութեան փորձերի մասին: Յայտն-
վում է, որ լեպրա ասված հիւանդութիւնը բժշկելու
փորձերի երկու դէպքումն էլ առաջ եկաւ հիւանդնե-
րի կազմուածքի մէջ միմիայն ընդհանուր լեպ-
րա, առանց ոչինչ ներգործութիւն ունենալու
բուն հիւանդութեան վրա: Նոյնպէս և լուս պ ու ս
հիւանդութեան երկու դէպքերում կրկնված սըր-
կուսից յետոյ, նկատված է եղել հիւանդների
մօտ՝ գլխի ցաւ, մարմնի թուլութիւն, կոկորդի
ցաւ, տաքութեան աստիճանի բարձրանալը, բայց
նոյն իսկ լուս պ ու ս-ով վարակված մարմնի մասերի
դրսթիւնը ոչինչ փոփոխութեան չենթարկվեց:
«In beiden Fällen blieb eine locale Réac-
tion an den von Lupus befallenen Partien aus»
ասում է իր յօդուածի վերջում գիւլցեանդը:

Գ. Ա.

Ինքն ՊէՏԻ Ե ԱՆԵՆԻՐ

Մենք ունենք մի քանի հարուստ կալուածատե-
րի, որոնց համար գոյութիւն չունեն գիւղացին,
ուսմիկ արհեստագործ և աղքատ դասակարգը:
Նրանք աւելի զբաղված են դատաստանական
պրօցէսներով, խելով մէկը միւսից մի կտոր հող,
ահապին գումարներ վատնելով դատաստանական
ծախսերի վրա, իսկ աղատ միջոցներին գիւղա-
ցիներին ծնչելով, տուգանքներին ենթարկելով
սրան և նրան, որ համարձակիլ են մի կտոր
փայտ կարելու անտառից վառելիքի, գործիքի

ապրում է գործարաններով, նաւահանգստով և
վաճառականութեամբ:

Քաղաքի կենտրոնը, ուր խմբված են գլխաւոր
գրասենականները, հիւանդները և կառավարչա-
կան հիմնարկութիւնները՝ ծովափն է իր նեղ
չըջակցելով: Տայ վաճառականների տեղը «Յէն-
տրալ» հիւանդների տակը և նրա շուրջն է, տա-
րածվելով մինչև «Կալիսի» հիւանդները և կանգ
առնելով հայոց խղճուկ եկեղեցու մօտ:

Հայոց եկեղեցին մի սենեակ է, որը ոչնչով չէ
զանազանվում ուրիշ տներէից, իսկ ուսումնարանը
մի առանձին շէնք է, բաւական կոկիկ և յար-
մար:

Հայ հասարակութեան անդամները, ինչպէս երևում
է, այնքան հեռու են ապրում միմեանցից, որ շատե-
րը, նոյն իսկ ինտելիգենտ երիտասարդները միմեանց
հեռ ծանօթ չեն: Ինտելիգենցիա չը կայ Բաթու-
մում, եթէ կայ էլ, դոնէ ամբարն ցրված են, որ
միմեանց հեռ խօսելու համար կամ տեսնուում են
քաղաքի միակ գրադարանի մէջ և կամ Բարե-
կործական ընկերութեան տարին մի քանի ան-
գամ կայացող ընդհանուր ժողովում:

Բարեկործական ընկերութեան այդ ճիւղը դո-
յութիւն ունի մի քանի տարուց ի վեր, և ունի
100 անդամ ու մի վարչական ժողով, հինգ ան-

կամ տան կտորը ծածկելու համար, միթէ դրանք
մտածելու են գիւղացու վրձակը բարեկաւարներու
մասին:

Մենք ունենք քաղաքում աստիճանաւորների
և ծառայողների մի ստուար խումբ, այդ դա-
սակարգի պարոնների մեծ մասը զբաղված են
իրանց պաշտօնը փախելի պահելու և բարձրա-
նայու ձգտումով, ազատ միջոցներին կլուրի դա-
ւիճներում գումարահաւաք, սիրային արշաւանքնե-
րի վրա խորհելու, վիճելու և պիտիքներու,
թղթախաղերում և ինչպէս ընկերով շուտելու իրանց
ուժիկը, կարելի է արդեօք սպասել այդ դաս-
կարգից արտացաւ կարեկցութիւն դէպի օգնու-
թեան կարծող հասարակութիւնը:

Կայ հայ ուսուցիչների մի խումբ, մենք երբեք
չենք համարձակվում ծանրանալ նրանց շնքին,
նրանք ունեն իրանց որոշ պարտականութիւննե-
րը մանուկ սերնդի կրթական գործում, այնու-
ամենայնիւ մենք սպասում ենք նրանցից աւելին,
թէպէտ և մասամբ նրանք ցոյց են տալիս իրանց
պատրաստականութիւնը՝ ժողովրդական դաս-
խօսութիւններով, թատերական ներկայացումնե-
րով նպաստել հասարակութեան միտքը և ճշակը
զարգացնելուն:

Գուցէ դուք մասնաւոր ներք հոգեւորականութեան
վրա, որը կարող է մեծ դեր կատարել հասարա-
կութեան մէջ, որովհետեւ նա ունի ազատ մտքը
ժողովրդի ամեն խաւերում, կարող է նրան հաս-
կացնել, մղել դէպի առաջադիմութիւն: Այո, հոգեւորականութիւնից կարելի է պահանջել և
սպասել, բայց, դժբաղդաբար մեր հոգեւորականու-
թիւնը չունի այն զարգացումը, որ կարողանայ
կենցաղավարական պայմաններին նպաստելու ա-
ռաջնորդել, և եթէ կան մի երկուսն էլ, դրանք
այնքան ծանրաբեռնված են բազմազան պաշտօն-
ներով՝ միաժամանակ իբրեւ ծխական քահանայ,
ուսուցիչ, հոգաբարձու, հոգեւոր կառավարութեան
անդամ, եկեղեցիների բարեկարգիչ, աւագ լուսա-
բար, պողի ժողովող և այլն, որ մինչև անգամ
ժամանակ էլ չեն դանում եկեղեցու մէջ քարո-
զելու...

Սակայն չը պիտի յուսահատվենք, բացառու-
թիւններ կան ամեն դասակարգերի մէջ. հարկա-
ւոր է միայն այդ բացառիկ անհատներին մօտե-
նալ միմեանց, ձեռք ձեռքի տալ, համերաշխու-
թեան կայ հաստատել, մտնել ժողովրդի ամեն
խաւերի մէջ, սթափեցնել նրանց անտարբերու-
թիւնից, հասկացնել արհեստագործին, երկրագոր-
ծին, մշակին և ամենքին իրանց սխալ ուղղու-
թիւնը, առաջնորդելով նրանց օգտակար և պի-
տանի գաղափարներով: Կայ մեր քաղաքում մաս-
նագէտ գիւղատնտես, բարոյապէս պարտաւորեց-
նել նրան, կամ մինչև անգամ նրաթաղէս վարձատ-
րել, որ նա ստէպ ստէպ յաճախելով գիւղերը
զատախօսէ գիւղական հասարակութիւններին իր
մասնադիմական ճիւղից, համոզէ նրանց համայ-
նական ոյժով ձեռք բերել ֆիզիկական աշխա-
տանքը հնչադանող գործիչները, հասկացնէ գիւղա-
ցուն, որ միայն գարի և ցորեն ցանելը չէ գիւղացու
պարագմունքը, այլ նա, հետեւելու է և զարգացնե-
լու իր մէջ գիւղատնտեսական այլ ճիւղեր, սերմա-
նէ զանազան սերմեր, ձեռնամուկ լինի անդատու-
նապահութեան, չերամսպահութեան, կաթնատն-

դամներից քաղկացած: Այդ ընկերութիւնը պա-
հում է օրիորդաց դպրոցը և եթէ դրա մէջ է
սահմանափակել իր գործունէութիւնը, ոչնչով ա-
ւելի չէ անում միւս բարեկործական ընկերու-
թիւններից:

Այսպէս ուրեմն, հայ ինտելիգենտ երիտասարդ-
ները մեծ մասամբ իրար անծանօթ են, զբաղված
են մասնաւոր գործերով, նրանց չէ հետաքրքրում
ոչ մի հասարակական հարց, որովհետեւ ոչ ոք
նրանցից չէ ձեռնարկել մի որ և է հասարակա-
կան գործի, այդ փաստը ևս աչքի է դարձում
խիղի, տեսնելով թէ ինչպէս ամբողջ Բաթումը
ունի միայն մէկ հատ գրադարան, որը պատկա-
նում է մի ուսուցիչ և որի մէջ բացի սեղանի վրա
զրկած երկու հատոր «Թովմաս եղբոր տնակից»,
ոչ մի հայերէն գիրք կամ թերթ չէ կարելի տես-
նել: Գրա փութարէն նա հարուստ է Ֆրանսերէն,
ուսանելի և գերմաներէն թերթերով և 2,000-ից
աւելի ուսանելի գրքերով: Այստեղ իսկ ևս ա-
ռիթ չունեցող անասնու հայ ինտելիգենցիան,
կարծէք թէ նրա անդամները խուսափում են մի-
մեանց հանդիպելուց: Պատահում էր երբեմն
տեսնել միմեանց բարեկող և լուսթեամբ անցնող
երիտասարդներին, որոնցից իւրաքանչիւրը այնքան
ընկրմիլ է իր վաճառականական գործերի մէջ,

տեսութեան, մեղաւարտութեան և այլն: Մենք ու-
նենք փոքր ի շատէ պատրաստված երիտասարդ-
ներ, որոնք ընդունակ են հրապարակախօսել,
հրաւիրել հասարակութիւնը ժողովրդական դա-
սախօսութեան ներկայ լինելու, բնորդի նիւթեր
տեխնիկայից, ագրոնոմիայից, դասախօսել աղգե-
րի պատմութիւնից, որոնք առաջադիմում են,
հետեւելով ժամանակի պահանջներին, իրանց
նորանոր ձեռնարկութիւններով, արհեստների և
տեխնոլոգիայի կատարելագործութեան ճիւղերով և
տեխնոլոգիայից: Մենք ունենք և հմուտ պար-
տիզական ուսուցիչներ, որոնք կարող են նոյն իսկ
իրանց օրինակելի պարտէզներում, բանջարանոց-
ներում զատախօսել և ներկայացնել հասարակու-
թեանը խելացի պարտիզականութեան և բանջա-
րանոցապահութեան արդիւնները, օրպիսիք ձեռք
են բերված մի քանի տարիների ընթացքում և
օրպիսիք ձեռնարկութիւնից կարող է շահվել ա-
մեն մի քաղաքացի, քանի որ անպայմանների
մեծ մասը ունի իր տան կից գոնէ մի փոքր
պարտէզ և պարսպ հող, բայց իր անհոգութիւն-
նից՝ կամ նշանակութիւն չէ տալիս և երբեք չէ
շահվում: Մենք ունենք և Բարեկործական ընկե-
րութեան ճիւղը Ախալցխայում, ընկերութեան
բաժինը անշուշտ համաձայնում է առաջնորդ լի-
նել չերամսպահութիւնը տարածելու քաղաքում
իր սեփական, օրինակելի չերամսպահութեան
փոքրիկ բաժանմունքը բանջարի գործնականա-
պէս ծանօթացնելով ժողովրդին շահագործութեան
այդ աղբիւրի և միջոցի հետ: Ընկերութիւնը այդ
ձեռնարկութեամբ իր նշանաբանին յատուկ մի
մեծ բարեկործանութիւն կատարած կը լինի Ախալ-
ցխայի համար, եթէ իր հեղինակութեան համա-
պատասխան ցանկութիւն ունենայ կենդանի օրի-
նակ հանդիսանալու: Հասարակութիւնը հետեւում
է միշտ շուտափէլ փաստին և այդ կարող է ապա-
ցուցանել ընկերութիւնը ոչ մեծ զոհաբերու-
թեամբ: Այո, չերամսպահութիւնը կարող է ըն-
դարձակ ծառայել արդիւնաւոր պարագմունք լինել
Ախալցխայում, քանի որ բնական և կլիմայական
պայմանները նպաստաւոր են մեզ: Վերջապէս և
հոգեւորականութիւնը կարող է անձամբ ծանօթա-
նալ աղբիւրի առաջադիմութեան պատմութիւննե-
րի հետ և մտնելով իր ժողովրդի շրջանը, պէտք
է հասկացնել, խրախուսէ չը վատնել, այլ միշտ
ջանք անել կատարելագործելու արհեստները,
օգտուել բնութեան հարստութիւնից, ճիւղ, եռանդ
և քաջութիւն ունենալ կաւելու կենքի գոյու-
թեան պատերազմում, երբեք չը յուսալ երկնային
ճրի մանանային, պատերազմների կողպուտին
կամ երակայական երկաթուղիների բացվելուն:
Իսկ մենք մի այլ անգամ կը վերադառնանք ա-
ւելի մանրամասն բացատրելու թէ որքան նպաս-
տաւոր և արդիւնաւոր է չերամսպահութեան
պարագմունքը Ախալցխայի մէջ զարգացնելը:

Ախալցխա. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԵՐ

ԵԿԱՏԵՐԻՆՆԱՅԻՆ ԵՄԵՐՈՒՄԻՆ ԵՄԵՐՈՒՄԻՆ
30-ին, տեղին հայ թատրոնատենքերի խումբը,
մասնակցութեամբ դերասան պ. Կարինեանի, նո-
րակառոյց դպրոցի դահլիճում, ներկայացրեց

որ ձեռք հետ նոր ծանօթացող մէկը հայկ. թէ մի
բուլէ խօսէ, և շնորհեց, դործ ունեն՝ ասելով,
կը հեռանայ:

Խօսելով Բաթումի միակ գրադարանի մասին,
չը մոռանամ աւելացնելու, որ նրա բաժանորդ-
ները մեծ մասը հայեր են, թէ և այնտեղ չը կայ
ոչ մի հայերէն գիրք և չեն ստացվում հայերէն
թերթեր: Բաժանորդագրութեան պայմաններն
իսկ այդտեղ խիստ անմատչելի են: Գիրք վեր-
ցնող բաժանորդը, բայց 3—5 ռուբլի գրաւից,
ամսական տուրք է վճարում 1 ռուբլի: Բնութե-
ցարանի մուտքն արժէ 10 կօպ: Գրադարանի
ունի աւելի քան 150 բաժանորդ: Բացի այդ
գրադարանից, ուսանելի լրագիրներ կարելի է
կարդալ սրճատներում ևս:

Վերում ասեցի, որ հայ երիտասարդութիւնը
բոլորովին ընկրմած իր առեւտրի մէջ, մոռացել
է հասարակական գործերը, այդ երիտասարդների
փութարէն դուք ամեն մի քաղաքացիական հոգսների,
որոնք եթէ իրանց պարտախօսութիւններով և
ֆրանսիական ձեռքով ձեռք ձեռքից կը շարժեն,
գոնէ կը լսէք նրանցից մի քանի կենդա-
նի հարցերի վրա անձուռնի գաղափարներ: Այդ-
պիսի թերթերացի հայ երիտասարդներ թուով թէ և

«Մանդուխտ կոյս» ողբերգութիւնը: Սիրողները
բարեկեցաբար կատարեցին իրանց դերերը, մա-
նուսնող լաւ էր Մանդուխտի դերը կատարող Կա-
կին Ե. Աշխաբեան, չը նայելով որ միայն երկ-
րորդ անգամն է բնի դուրս գալիս: Մուտք մե-
տաւորապէս 200 ռուբլի եղաւ:

ԱԿԿԵՐՄԱՆԻ ծխական հայոց դպրոցի հոգաբար-
ձու պ. Խուրաւիդի Աստուածատրեանց նախըն-
կէ «Մշակի» տարեկան մի օրինակ նոյն դպրոցի
օգալին:

Պ. Ա. Օհանջանեան խնդրում է մեզ տպարկել
հետեւեալը. «Փոխադրել եմ և թարգմանել մասն
կական թատրոնի համար» «Սև կատու, կամ խա-
րեւայ ու քաղցրասէր», «Ոսկէ ձկնիկ, կամ ան-
հաղաղ», «Մանկական խնջոյք», «Իմ թռչնի-
կը» և «Հետաքրքիր» կատակերգութիւնները, ու
րոնք շուտով լոյս կը տեսնեն մի առանձին դը-
քոյիով: Նոյնպէս թարգմանված են «Ոսկէ ժամա-
ցոյց», կամ փոքրիկ բարեկործ» և «Բարի գոյ» և
բարի վերջ» գրամաները:

Թիֆլիսցիներին ծանօթ Բեյզանուէր պիսնի-
տը անասելի աշուղութիւն ունեցաւ թէ վաշա-
վայում և թէ Կիւէլում իր տուած կօնցերանից
ժամանակ: Կիւէլում ունիղիւրները այն աստիճա-
նակութեան էին հասել, որ նրան ձեռքերի վրա
էին բարձրացրել կօնցերանից յետոյ:

Կայսերական կովկասեան Գիւղատնտեսական
ընկերութեան անդամները հրաւիրվում են ընկե-
րութեան հերթական ժողովի նիստին, որը լինե-
լու է այսօր, հինգշաբթի, փետրվարի 7-ին, 71
ժամին երեկոյեան: Պարագմունքների աւարկա-
ներն են. 1) Ընթացիկ գործերը, և 2) Վ. Ա. Ստա-
րոսկիու գեղեցումը «Ֆիլոսոֆիայի մասին գիւ-
թային» նահանգում: Նիստին կարող են ներկայ
գտնվել և կողմնակի անձինք:

ԲԱԹՈՒՄԻՄ մեկ գրում են. «Այսօր, փետրվարի
3-ին, այստեղ ձիւն է զալիս»:

Ստացանք ԲԱԹՎԱՆՍԱՐԱՅ ԳԵՂԵՐԻՄ մի խումբ
նուիրատուներից 4 ռուբլի 45 կօպ, յօդուած հի-
ւանդ դերասան Աղամանին:

ՎԱՍԻԼԵՄԱՍՏԻՄ, տ.տ. Կատարինէ Ախ-
շախ-Լիսեյանց և Տիւրքի Կոստանեանց հա-
բելով 43 ռուբլի յօդուած Աղամանին, ուղարկեց
այդ փողը «Մշակի» խմբագրութեան անունով
խնդրելով որ հասցենք Աղամանին: Ընդամեն
ունենք, ուրեմն, յօդուած Աղամանին՝ 47 ռուբլի
45 կօպէի:

Թիֆլիսի գրավաճառ Խիղճեկէ հրատարակի
նորերում երկու ուսանելի գրքիցներ ժողովր-
դական ընթերցանութեան համար: Այդ գրքերի
ները կաղմաց պ. Վ. Լուկիւիլի: Դա նոյն պա-
րոնն է, որը կաղմէ և և հայերէն ժողովրդական
ընթերցանութեան համար «Պատիկի», բայց չը
տիկ՝ գրքից: Նոյն իսկ այդ ուսանելի գրքերի
ներից մէկը «Ростомъ въ нѳготѳбѳ, а ума»

բիշ են, բայց իրանց գոյութիւնը նշմարելի
անում մտնելով այս և այն գրանանակ, խօսելի
տաքանալով, մատիւն ալանջի ետեղ ցցած խա-
նութիւն խանութ վաղելով և ստացած «Արեւել»
մի համարը գովաբանելով, մի համար, ուր «Արե-
ւել» լրագրի խմբագրութիւնը անցեալ տարեկա
մասին մի ընդհանուր նշանաւոր տեսութիւն է
անում, այնքան նշանաւոր, որ խորհուրդ կը տա-
լինք կարդալ, տեսնելու համար, թէ որովի
ստոր խօսքեր և արտասանում թուրքաւայոց մի
ակ մեծ թերթի խմբագրութիւնը ինքնակամ կը
պով...:

Բաթումում ստացվում է «Արեւել» Կ. Պովիցի
«Մշակ» և միւս հայ թերթեր Թիֆլիսից, սրճա-
տներում կարելի է դանել յունական, տաճկական
և եւրօպական թերթեր իսկ:

Այս համառօտ հայեացքը ձգելով Բաթումի
վրա, միւս անգամ կանգ կառնեմ նրա գոյմա-
րանների և այնտեղ գործող ստուար մի հասարա-
կութեան վրա, որն իր քանակութեամբ կազմու-
մ է Բաթումի ժողովրդի համարեա կէտը և մեծ մա-
սամբ կաղմված է վրացի ցեղերից, պարսկահայե-
րից և թիւրքահայերից:

Ապր

ՅԱՏԱՅ քովանդակութիւնը նոյնն է, ինչ որ նրա վերջին տարիներէն քրոջիւրի բովանդակութիւնը, այսինքն ծանօթացնում է հնչող, դերասանական լիակատարութեամբ 10 կողմէն է: Միւս գրքով իր յայտնի գրողաձեւը, ամբողջական է հետաքրքիր քննադատական տեղեկութիւններ կապին հետ: Գրքովը կրում է «ОБЕЗНАЧЕН» վերնագիրը, գրված է նոյն թիւով, հասկանալի, մատչելի լեզուով և կարգապահութեամբ մեծ հետաքրքրութեամբ: Այդ վերջին գրքովը գրելը 15 կողմէն է:

Այսօրվայ մեր համարում տպված «Հիւսիսային քրոջակալութեան» հեղինակները ընկերացողը կը խորհայ, որ գեներալ Շարիկովի տեղ ներանդի նշանագրաւ նշանակվել է գեներալ Ֆրէզէ:

Մեզ գրում են ԲԱՌՈՒՄԻՅ հետեւալը. «Բաթմի հայ համայնքը, սրանից մօտ 8 տարի առաջ, զինեց եկեղեցուն կից մի կտոր դահլիճ: Օրինակ հիման վրա, եկեղեցու համար հող գնելը անհնար է. Սինդի հրամանի չէ թոյլատրում, աստի այդ կտոր դահլիճը ձեռքից բաց չը թողնելու համար, տեղիւ հայ հասարակութիւնը անմիջապէս գնելուց յետոյ, շտապեց հաստատել մի մասնաւոր մարդու, այն է պ. Սարգիս Յովհաննիսեանի վրա, մինչև Սինդի հրամանի ստանալը: Այժմ երբ այդ հրամանը ստացվեց, պ. Յովհաննիսեանը, գործը այսօր վաղը գցելով, մինչև այժմ չէ յանձնում եկեղեցուն համայնքի կողմից իրան պահ տուած գետնը, առարկելով, թէ թիւ ժամանակ չունի և միշտ տկար է: Մեր կարծիքով պարտքը աւելի էլ պէտք է շտապէր կատարել իր պարտաւորութիւնը, քանի որ հիւանդ է, մեծ բուրդ մահկանացու ենք, մեզանից ամեն մի առողջ մարդ կարող է ամեն րոպէ հիւանդանալ, իսկ հիւանդ լինելով, կարող է մահանալ: Ուրեմն ինչպէս կարելի է այդ տեսակ գործում յայտնուել և չը շտապել իր պարտաւորութիւնը կատարել: Չը մոռանանք որ այսպէս թէ այնպէս, հասարակութեան փողով գնված եկեղեցւոյ տեսական այդ գետնը իրապէս, դժուար մնանք իր համաձայն, համարվում է մինչև այժմ մասնաւոր մարդու, Սարգիս Յովհաննիսեանի սեփականութիւնը»:

Շաբաթ օր, փետրվարի 9-ին, կայանալու է ԹԻՖԼԻՍԻ թատրոնում տիկին և պարոն Լասալի բանափառը: Կը ներկայացնեն Վիլհելմ «Don César de Bazan» յայտնի դրաման: Գլխավոր դերը խաղաւու է պ. Լասալ, որը արդէն ցոյց է տուել իր քան որպէս հմուտ դերասան ժօրթ Սենի «Le maitre de forge» դրամայում: Ներկայացման միջոցներում թատրոնական օրէկտորը, իսպոլտով-կոմիտիի ղեկավարութեամբ կը նուագէ. Ամբրուաշ Թովայի «Le songe d'une nuit d'été» և Ռիչի «L'Arlésienne» պիեսները:

ՊԱՆՉԱԿԻՅ մեզ գրում են. «Ամսիս 3-ին, բաթմի քրոջիւրի ծանուցադրով, անցեալ յունվար ամսի 27-ին ընտրված պատգամաւորները հաւաքված էին ս. Յովհաննէս եկեղեցում նոր երեցփոխի ընտրութեան համար: Բոլոր պատգամաւորները ժողովին ներկայ էին: Նոյն ժողովում հարց առաջարկվել է, նախ պատգամաւորները ընտրութիւնը կարելի է արգելք օրինաւոր համարել, քանի որ աւելի քան 600 ծովից միայն 54 հոգու կողմից են ընտրվել: Ներկայումս նախ քան նոր երեցփոխի ընտրելը հարկաւոր չէ արգելք այժման երեցփոխի հաշիւը քննել և ապա նոր ընտրութիւն անել, ըստ որում ընտրութեան ժամանակ գուցէ այժմանին իր արժանաւորութեամբ փրկանացելով միւս թիւնածոններին՝ նորից ընտրվել: Այս հարցերը քննելուց յետոյ պատգամաւորները իրանց ընտրվելը ապօրինի համարելով արձանագրութիւն կազմեցին: Առ այժմ դժուարանում ենք երեցփոխ ընտրել: Արդեօք արդարաւոր չէր լինի նորից հրաւիրել ծովականներին և փոխարինել ընտրութեան համար պատգամաւորները ընտրելու նպատակով: Թէև արձանագրութեան մէջ չէ մտել երկրորդ հարցը, բայց և այնպէս մենք այս առաջարկութիւնը իրաւացի և կարեւոր ենք համարում, մինչև նոր երեցփոխի ընտրութիւնը»:

Շուտով Պետերբուրգի պարսից դեսպան, Միր-Մահմուդ-խան, արձակուրդ վերցնելով, պէտք լիւրագրաւորապէս թէհրան:

ԵՃՄԻՍՏԻՅ մեզ գրում են. «Վահագնաւ կաթողիկոսի հիւանդութիւնը, որը սկսուած բաւական երկու-դ օրէց միաբանութեան մէջ, այժմ թիւնածոն է: Հիւանդութեան անցել է, բժիշկները պահանջում են, որ հիւանդին անպայման հանդիստ կենք վարի, որպէս զի կարողանայ մի փոքր կազդուրվել»:

Փետրվարի 7-ին կայացաւ երկրորդ անգամ պ. Ամբրուսեանի կողմից ԹԻՖԼԻՍԻ կաթողիկոսական բանկի թատրոնում: Կիսով չափ իր թատրոնի հասարակութիւնը լաւ ընդունեց թէ պ. Ամբրուսեանի երգը, թէ պ. Պետրոսեանի կարգապահութեան օրինակները և թէ պ. Միրզանի երգած սրամիտ կուպլետները, մի քանի անգամ կրկնել տալով կատարածը:

Կովկասեան գրաքննական (ցենզորական) մասնաժողովը մէջ նշանաւոր փոփոխութիւններ են կատարում: Արեւելեան լեզուների առաջ ցենզորը, պ. Մելքե-Մէհրաբեան, ինչպէս յայտնի է, հեռացել է ծառայութիւնից, այժմ հրաժարական է տուել իր պաշտօնից և ուսուց ցենզորը, պ. Բեյ-Պարթաբ, իսկ նրա տեղը նշանակվում է Պետերբուրգից եկած պ. Նոֆալ: Միայն յայտնի չէ դեռ ևս թէ ով կը նշանակվի Մելքե-Մէհրաբեանի տեղը:

ԴԵՐԵՆԻՅ մեզ գրում են, որ յունվարի 21-ին այդպիսի ժողովարանի մէջ հայ սիրողները ներկայացրին «Ոճաւորների ընտանիքը» պիեսան: Թղթակցին ասում է որ ներկայացումը անաջող էր, մասնաւորապէս ինչպէս պիեսան սիրողների ոյժերից վեր էր: Միայն լաւ էին պ. Խաչատուր (Կորբաթի դերում) և օրիորդ Արաման (Բաղրալի դերում):

Տեղական ուսու լրագիրները հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութեան հաշուով քանի մի ամիս առաջ Իերլին ուղարկված բժշկ. Աթաթիւրի վերադարձել է Թիֆլիս, իր հետ բերելով Կօխի լիմֆայի մի սրտակ: Քաղաքային բժշկական բժիշկները վճել են բուժարանում ձեռնամուկ լինել Կօխի լիմֆայի սրտակների փորձերին: Փորձերը անողութեամբ առաջ տանելու համար այդ բժիշկները դիտաւորութիւն ունեն քաղաքային վարչութիւնից խնդրել 400 րուբլու միանգամ օժանդակութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿԻՅ ԴԻ ՌՈՒԿԻՆԻ

Հռոմի լրագիրները կենսագրական հետեւալ մանրամասնութիւններն են հաղորդում խաղաղական նոր պրէմիերի մասին:

Մարկիզ դե-Ռուզինի պատկանում է սիցիլիական արիստոկրատական, ամենաազնիւ և ամենահաւուստ ընտանիքներից մէկին և դեռ շատ երիտասարդ ժամանակ սկսեց իր քաղաքական գործունէութիւնը: Նա յաջողութեամբ քաղաքագրուել և եղել Պալերմոյում, պրէմիեր և եղել Նապոլիում և, ինչպէս նախընթաց գործերի միջոցով էր մի անգամ պիւր հասակում, երբ ուրիշները միայն նոր են սկսում իրանց քաղաքական գործունէութիւնը: Ռուզինի չէ կարող նշանաւոր հետեւոր անուանվել, բայց նրան մեծ ուշադրութեամբ են լսում Նապոլիում և դանդաղ, անգոյն և սուսանց կրթի մեծ ջանք անելով ծածկել իր սիցիլիական արտասանութիւնը:

Պալերմոյի ապստամբութեան ժամանակ, 1866 թվին, մարկիզ Ռուզինի, որը միայն 27 տարեկան էր, քաղաքային սինդիկի պաշտօն ունէր: Նա մի փոքրիկ զօրավարի գլուխ անցնելով, մեծ քաղաքային նշանակվելով նոյն քաղաքում, Ռուզինի պրէմիեր նշանակվելով նոյն քաղաքում, Ռուզինի անուանում խոտութիւն գործ դրեց ապստամբների դէմ: Ապա պրէմիեր պաշտօնով նա Նապոլի վերադարձր: 1869 թվին, թէպէտ մարկիզ Ռուզինի դեռ ևս պատգամաւոր ընտրված չէր, գեներալ Մէհրաբեան յանձնեց նրան ներքին գործերի միջնորդութիւնը: Մարկիզն այն ժամանակ հազիւ 30 տարեկան լինէր: Բոլորովին անսովոր լինելով քաղաքական ժողովներին, նա իսկույն և եթ անաջողութիւն ունեցաւ պատգամաւորների ժողովում: Նա եռանդուն կերպով պաշտպանվում էր ձախակողմնականների դէմ, բայց, այնուամենայնիւ, շատ դժուար կացութեան մէջ էր գտնվում, որից կարողացաւ դուրս գալ միւս միջնորդների

օգնութեամբ: Դրանից յետոյ, երկար տարիներ ընթացքում, մարկիզ Ռուզինի աշխատում էր մոռացնել տալ խաղաղացիներին նրանց վրա իր արած վատ տպաւորութիւնը: Շատ փառասիր լինելով, նա վաղուց արդէն աշխատում էր կառավարութեան դէմ իր ձեռքն առնել: Մարկիզ Ռուզինի արիստոկրատական ձեւերը, նրա ծագումը և հարստութիւնը սիրելի են դարձրել նրան Ումբերթո թագաւորի պալատում:

ՔԱՂԱՌԱՐՔԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԶՍՅՈՒ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

«Արեւելք» խմբագիրներն պ. Արեւելք Արեւելքեան, որ 76 բանտարկուածներին հետ Մոսկուի խմբան երկույն արձակուրդ քաղաքին չէր արժանացած և յետոյ Սուլթանէն եկած մասնաւոր մէկ իրաւով հազիւ Մոսկուի երկույն կրցաւ բանտէն ազատուել, «Արեւելք» յունվար 12/24-ի թիւին մէջ ստիպուել է իր ազատութեան փոխարէն Սուլթանի երախտագրութեան մի յօդուած հրատարակել»:

«Մինչև այժմ սովորութիւն էր որ Մարսելի Հայերի մատրան եկեղեցական Հայրը որ Ֆրանսայի հայ դաղթականութեան Հոգևոր Հովուի պաշտօնը կը վարէ, տարին մի անգամ, Զատիկ տօնին, այցելելով Փարիզի հայ դաղթականութեան հանդիսաւոր պատարագ կը մատուցանէր այնտեղ. նոյնպէս և ի հարկին երբ իմաց տուէր, անմիջապէս Մարսելի կերթար Փարիզ, այնտեղի Հայերի հոգևոր պետերը հոգաւոր համար: Այժմ կիսմասնը որ Փարիզի Հայերի կրօնական ջերմեանդութիւնը աւելցած լինելով և փափաքելով որ ամեն կիրակի օր պատարագ տեսնեն, տարեկան վարձն ամբողջապէս վճարել են այն մեծ սրահի որ տարուն մէջ մէկ կիրակի օր միայն կը վարձէին պատարագ տեսնելու համար, և մի սեղան հաստատելով այնտեղ իրենց մէջ Հոգաւորութիւն մ'ալ կազմել են, այդ աղօթատեղի մատակարարութիւնն ու հոգատարութիւնն անուր համար: Մարսելի Հայերի նախորդ Հոգևոր Հովու Սահակ քահանայ խմբիւնում որ իւր պաշտօնէ դադարելէն յետոյ Մարսելիէն հեռանալով Փարիզ քաղաքում կը կենար, Փարիզի Հայերի Հովութեան պաշտօնը սկսել է վարել այժմ և Հոգաւորութիւնն իր կազմութիւնը, մատրան բացումը և Սահակ քահանայի պաշտօնավարութիւնը տեղեկագրելով Պատրիարքարանին, վաւերացում լինողը է: Մինչև անգամ տօնին առիթով սկսուել է արդէն պատարագ մատուցուել նորաբաց մատրան մէջ»:

«Ամբիկայում, Ռուսերի Հայոց եկեղեցուց շինութիւնն իր ժողովարանով մէկտեղ աւարտած լինելով, Ամբիկայի հայ դաղթականութեան Հոգևոր Հովու Յովսէփ Վարդապետ Սարգսեան փառաւոր հանդէսով կատարած է եկեղեցու օծման արարողութիւնը, յունվար 6/18-ին: Նիւ-Երզնի Հայերը անգլիական եկեղեցու եպիսկոպոս Բօթլըին դիմելով թոյլտուութիւն ստացած են նոյն եկեղեցու պատկանող Ս. Ոսկեբերան մատրան մէջ ժամերգութիւն կատարել կիրակի օրեր Հայաստանեայց եկեղեցու դրութեան համեմատ: Եպիսկոպոսական եկեղեցու դրութեան հետեղ Հայերն ալ Բօթլը եպիսկոպոսէն թոյլտուութիւն ստացած են իրենց մատրան մէջ կիրակի օր կրօնական պաշտօնունք կատարել հայերէն լեզուով անգլիական եկեղեցու դրութեան համեմատ»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պատական նոր միջնորդութիւնը դիտաւորութիւն ունի պակասեցնել տարեկան բիւջէտը 34 միլիոն ֆրանկով: Դի-Ռուզինի միջնորդութեամբ գահը դիտաւորութիւն ունի հեռացնել մի քանի նախնադասպետներին և նրանց տեղ նորերին նշանակել:

—Նորերում կայացաւ Բերլինում դերմանական մամուլի ներկայացուցիչներ պարահանդէս: Մամուլի ներկայացուցիչները հրաւիրելին իրանց պարահանդէսին և Վիլհելմ կայսրին: Սակայն կայսրը վերին աստիճանի սիրալիկ նամակ գրելով իրան հրաւիրողներին, ցաւ է յայտնում, որ տկարութեան պատճառով չէ կարող ներկայ գտնվել մամուլի ներկայացուցիչների պարահանդէսին:

—Ֆրանսիայում, ինչպէս և ամբողջ Եւրոպայում, գրաքննութիւն (ցենզորա) չը կայ, բայց գայութիւն ունի միմիայն թատրոնական գրաքննութիւն, որի նպատակն է ոչ թէ քաղաքական

տեսակետից նայել թատրոնական պիեսներին վրա, այլ միայն բարոյական տեսակետից: Այժմ Ֆրանսիական պատգամաւորների ժողովում հարց է յարուցված՝ եղած թատրոնական ցենզորան էլ իսպառ վերացնելու: Այդ առիթով սաստիկ բանակու է սկսվել Պարիզի լրագիրներում: Մի քանի օրգաններ ցենզորա օչնացնելու կողմն են, իսկ միւսները դէմ են այդ մտքին, աւարկելով, որ եթէ այժմ շատ անգամ ներկայացնում են անբարոյական պիեսներ Պարիզի թատրոններում, ինչ կը լինի երբ ցենզորան օչնացնուած կը լինի:

—Ֆրանսիական «Siecle» լրագիրը ասում է որ եթէ կրիստի մնար իր պաշտօնում, քաղաքական հանգամանքները սաստիկ կը բարդեն Եւրոպայում և կարող էր նոյն իսկ որ և է պատերազմ ծագել: Կրիստի դիտաւորութիւնն էր գրաւել Տրիպոլի և կտարէ Ֆրանսիայի գեներալներին: Միջերկրական ծովում Լրագիրն ասում է որ կրիստի անկման պատճառով աղաւ շունչ կը քաշեն Բերլինի, Լոնդոնի, Պետերբուրգի և Կ. Պոլսի ղեկավարական շրջանները:

—Ինչպէս յայտնի է, աւստրիական էրցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդ դէ-Սաւե, որը այս օրերս Ռուսաստան այցելեց, համարվում է Աւստրո-Ունգարիայի թագաւորանոց: Նախկին թագաւորանոց Ռուդոլֆի մահից յետոյ, աւստրիական կայսրական զոյգը, ուրիշ օրիշ չունենալով, Ֆրանց-Յովսէփ կայսրը յանձնեց իր ժառանգական իրաւունքները իր եղբորը, սակայն սա հրաժարելից ժառանգական իրաւունքներից իր որդու, ուրեմն կայսրի կըրոր որդու օգտին:

—Հեռագիրը մեզ հաղորդում է, որ կրիստի կղզու վրա նորից առաջ են գալիս խառնակութիւններ և անկարգութիւններ:

—Կրիստի անկումը ամենից շատ ուրախութիւն պատճառեց փոքրիկ Եվրոպայում: Ինչպէս յայտնի է Կրիստի միջնորդութիւնը քաջաւերում էր խաղաղացիների ձգտումները խաղաղան Եվրոպայում (Տիւսին կանտոն) ձեռք գցելու և իտալիային միացնելու: Եվրոպայի գլխաւորում որ Գերմանիայի հետ դաշնագրութիւն ունեցող իտալիան անկարգութիւններ ունի Եվրոպայի չէզոքութեան վրա, մինչև այժմ անդադար զինաւորվում էր և ամրացնում էր իր սահմանները Ման-Գոթարդի կողմից:

—Բերլինից հաղորդում են, որ գերմանական կայսրը դիտաւորութիւն ունի մարտ ամսին դուրս գալ Բերլինում մի նոր կոնֆերենցիա բանտարական հարցի մասին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց «Стрекоза» երգիծաբանական պատկերապարզ շաբաթաթերթը հետեւալ հանգանքներ է անում Կօխի լիմֆայի մասին:

Աշխարհահռչակ պրոֆէսոր Վիրիով կոթում է աշխարհահռչակ Կօխ պրոֆէսորին: Դա նման է առիւծի կռիւին՝ վաղրի հետ: Ի հարկէ, գիտնականները հրապարակաբար պէտք են անդադար վարի չեն, նրանք լրագրապետների պէտք իրար չեն մեղադրում անազնութեան, վարձկան լինելու, խաբէբարութեան, բթմամտութեան մէջ և այլն, նրանք բարակ, նուրբ, քաղաքավարի, ազնիւ կերպով են իրար կոթում: Վիրիով ուղղակի չէ ուրանում Կօխի գիտնոր օգտաւտութիւնը, այլ ասում է, որ Կօխի լիմֆայի հետ պէտք է վարվել զգուշ կերպով, շատ զգուշ, վերին աստիճանի զգուշ, այնքան զգուշ՝ որ աւելի լաւ է ամենին չը գործածել այդ լիմֆան: Վիրիով ասում է, որ հիւանդին «Կօխին» սրտկուց յետոյ, բացիլները, որոնք հիւանդի ներքին օրգանների մի որոշ տեսակէն կենսաբանական միտում են տարածվել ամբողջ օրգանիզմի մէջ և հետզհետէ նոր բնութիւն կազմում մարդու կազմուածքի մէջ... Շատ միջոցաւորական դիւտ... Այդ հայեցակետից լինող վրա նայելով, Վիրիով դրականապէս խորհուրդ է տալիս չը սրտկուց «Կօխին»՝ ծանր հիւանդներին: Այժմ հարցնում ենք, ապա ում պէտք է սրտկուց «Կօխին»։ Պարզ բան է, որ ոչ առողջներին, քանի որ առողջները միշտ կը նախապաշարեն արաղ ամէլ իրանց սրտուր քան թէ Բերլինի լիմֆան օրսկու տալ իրանց կաշու տակ...
* * *

Երկու ծանօթներ միասին անցնում են փողոցով և հանդիպում են մի մուրացկան կնոջ, որը ողորմութիւն է լինողում:

—Դիտէ՛ք, ես երբեք ողորմութիւն չեմ տալիս մուրացկաններին, ասում է մէկը:

—Ինչի, հարցնում է միւսը:

—Ես հետաւում եմ այն սկզբունքին թէ «երբեք չը պէտք է անես ուրիշին այն, ինչ որ չես ուղարկում քեզ անէն»:

* * *
Գիւղական հայոց ուսումնարանի ուսուցիչը հարցնում է աշակերտին:
—Աստուած ամենից առաջ ինչ ստեղծեց:

